Տեղեկատու թիվ 12 (դեկտեմբեր 2021թ.)
Newsletter N 12

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողովն Արցախում

Երևանում 2021թ. նոյեմբերի 29-ին մեկնարկած ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողովը դեկտեմբերի 2-3-ին իր աշխատանքները շարունակեց Ստեփանակերտում: Խորհրդաժողովի աշխատանքները մինչ այդ գումարվել էին նաև Գորիսում:
Հայ դատի ավելի քան 20 հանձնախմբերից և գրասենյակներից, ինչպես նաեւ ՀՅԴ կուսակցական մարմիններից ժամանած մոտ 50 ներկայացուցիչները Ստեփանակերտում նախ այցելեցին Եղբայրական գերեզմանոց՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին:
Դեկտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում խորհրդաժողովի մասնակիցները հանդիպում ունեցան ԱՀ ԱԺ նախագահի, խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ղեկավարների, պատգամավորների, ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի, ԱՀ արտաքին գործերի նախարարի, ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի հետ: Հրավիրյալները նախ հանդես եկան ողջույնի խոսքով, տեղեկություններ հաղորդեցին իրենց ոլորտների մասին և պատասխանեցին մասնակիցների հարցերին:

Text Link

Ընկճվածության էջը մեզ համար փակված է. Հակոբ Տեր-Խաչատուրյան

2022թ. դեկտեմբերի 2-ին Արցախում շարունակված ՀՅԴ Հայ դատի և հանձնախմբերի խորհրդաժողովի ժամանակ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը խոսել է խորհրդաժողովի աշխատանքների հիմնական ուղղությունների մասին.
«Հետպատերազմյան այս շրջանում կա ընդհանուր ընկճվածություն: Այդ ընկճվածությունը և՛ հայրենի զանգվածների մոտ է, և՛ զգալի է հատկապես Սփյուռքի պարագայում: Մեզ համար ընդունելի չէ այս երևույթը, և Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Հայ դատի կառույցները, մեր բոլոր շարքերով ու համակիրներով աշխատելու ենք, որպեսզի դուրս գանք այդ հոգեբանական ընկճվածությունից: Մեզ համար այդ էջը փակված է:

Text Link

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողովի աշխատանքների մասին

2021 թվականի նոյեմբերի 29-դեկտեմբերի 3-ը Երևանում, Գորիսում և Ստեփանակերտում գումարվեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողովը:
Խորհրդաժողովին մասնակցել են Հայ դատի ավելի քան 20 հանձնախմբերի շուրջ 50 ներկայացուցիչներ:
Խորհրդաժողովի մասնակիցները լսեցին զեկուցումներ՝
ա) ՀՅԴ Բյուրոյի և Հայաստանի գերագույն մարմնի կողմից՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների արտաքին քաղաքականութեան մարտահրավերների, ՀՀ ներքաղաքական իրավիճակի և 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում ու այնուհետեւ ՀՅԴ Հայ դատի համակարգի աշխատանքների մասին,
բ) ոլորտային փորձագետների կողմից ներկայացված՝ Ադրբեջանի և Թուրքիայի արտաքին ու ներքին ճակատներում քայլերի ու զարգացումների վերաբերյալ, ինչպես նաեւ՝
գ) Արցախի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից (Արտաքին գործերի նախարար, Մարդու իրավունքների պաշտպան, Անվտանգության խորհուրդի քարտուղար)՝ համապատասխան ոլորտների վերաբերյալ:
Խորհրդաժողովի մասնակիցները Երեւանում այցելեցին Եռաբլուր, իսկ Ստեփանակերտում՝ Եղբայրական գերեզմանատուն-հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցեցին արցախյան բոլոր մարտերում և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների հիշատակին: Նրանք ծաղկամատույցով հարգեցին նաեւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի հիշատակը:

Text Link

Լույս է տեսել «Հայ Դատի տարեգիրք 2020»-ը

2021 թվականի նոյեմբերին, ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակը հրատարակել է Հայ դատի հանձնախմբերի եւ

գրասենյակների 2020 թվականի աշխատանքը ամփոփող տարեգիրք։
«Երկու խօսք»ում ասված է.
Ձեզ ենք ներկայացնում «Հայ Դատի տարեգիրք 2020»-ը, որը լինելու է ամենամեայ։ Այն համառօտ ամփոփում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների ցանցի տուեալ տարուայ գործունէութեան կարեւորագոյն աշխատանքները։

2020 թւականը հայութեան, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների համար եղաւ փոթորկալի։ Յուլիսեան Տաւուշեան կռիւները, եւ յատկապէս Սեպտեմբերի 27-ին, Թուրքիայի եւ վարձկան ահաբեկիչների մասնակցութեամբ՝ Ադրբեջանի կողմից Արցախի դէմ սանձազերծուած պատերազմը յանգեցրին հազարաւոր մարդկային զոհերի, վիրաւորների, տեղահանուածների եւ տարածքային կորուստների։ Հայութիւնը յայտնուեց ամբողջապէս նո՛ր իրականութեան, նո՛ր վտանգների ու նո՛ր մարտահրաւէրների առջեւ։

Text Link

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքների ամփոփագիր (2021 թ. նոյեմբերի 24-դեկտեմբերի 29)

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

ANCA Chairman Urges Biden Administration Reset of U.S. Policy on Armenia & Artsakh



The Armenian National Committee of America (ANCA) is calling on the Biden Administration to condemn Azerbaijan's aggression, halt all U.S. military aid to Baku, and enforce sanctions against Azerbaijani President Ilham Aliyev and other senior members of his regime as part of an overall reset of U.S. policy towards Armenia, Artsakh and the broader Caucasus region.
"Left unchecked, Azerbaijan and our NATO 'ally' Turkey will continue to deploy the full force of their combined military capabilities to complete the Armenian Genocide, the planned, systematic destruction of the world's first Christian nation – a proud country of just three million people struggling to survive on the frontier of world freedom," stated ANCA Chairman Raffi Hamparian, in a

December 14, 2021, letter to President Biden, shared with Senate and House Committees on Foreign Relations, Armed Services, and Appropriations.
Hamparian's correspondence to the White House sets forth that the first step in a U.S. – Caucasus policy reset is ending the Administration's "patently false 'both-sides' narrative by clearly and consistently calling out Azerbaijan as the belligerent that launched the September 2020 attack on Artsakh." Hamparian went on to note the key criteria for a policy reset on Armenia and Artsakh, including...

Text Link

Spring Session of ANCA Hovig Apo Saghdejian Capital Gateway Program to Start February 21st

The Armenian National Committee of America (ANCA) has moved up the start of the Spring 2022 Session of the Hovig Apo Saghdejian Capital Gateway Program (CGP), to accommodate the growing number of recent graduates interested in exploring careers in policy, politics, and media in the nation's capital.
The Spring session of the CGP offers successful applicants three months of free housing, career-building workshops, and networking opportunities, along with personalized mentorship to help job-seekers kick-start their careers in Washington.
Applications for the Spring session are due by January 26th, and are available at anca.org/gateway/application.
The session begins on February 21st. In addition to recent graduates, the ANCA CGP also serves university students interested in Washington, DC internship opportunities– both at the ANCA offices and various governmental agencies, space permitting.
"Washington DC is hiring! And the ANCA Hovig Apo Saghdejian Capital Gateway Program team and alumni are perfectly placed to help recent university graduates kickstart their careers in policy, politics, and media," said ANCA Programs Director Alex Manoukian. "We provide free housing, mentorships, and seminars – right in the heart of the nation's capital – to help you find your place in Washington, DC."

Text Link

Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հայտարարությունը սպասվող եռակողմ հանդիպման և Արևելյան գործընկերության գագաթաժողովի առթիվ

Եվրոպական Միության Արևելյան գործընկերության ընթացիկ գագաթաժողովի և Եվրոպական Խորհրդի նախագահ Շառլ Միշելի ու Հայաստանի և Ադրբեջանի առաջնորդների հանդիպան վերաբերյալ
ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը և Եվրոպական երկրներում գործող իր հանձնախմբերը, որպես Եվրոպական Միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Եվրոպական Խորհրդի նախագահին կոչ են անում.

1. վերահաստատել ԵՄ աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին և հիմնարար սկզբունքներին, ներառյալ Արցախի/ Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության ինքնորոշման իրավունքը,

2. որդեգրել հստակ դիրքորոշում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության նկատմամբ ադրբեջանական շարունակվող սադրանքների անընդունելիության վերաբերյալ,
3. կոչ անել Ադրբեջանի իշխանություններին՝ անհապաղ և ամբողջությամբ դուրս բերել իրենց զինված ուժերը Հայաստանի Հանրապետության տարածքից,
4. կոչ անել Ադրբեջանի իշխանություններին ձեռնամուխ լինել հայկական բնակավայրերի շուրջ, այդ թվում՝ Արցախում, ապառազմականացված անվտանգության գոտու ստեղծմանը,
5. Արձանագրել, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման և սահմանազատման որևէ գործընթաց չի կարող պարտադրվել ուժի կիրառմամբ, մարդու իրավունքների ոտնահարմամբ՝ ի հաշիվ Հայաստանի ազգային անվտանգության և կանխորոշել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը՝ ադրբեջանական պահանջների համատեքստում,
6. ճնշում գործադրել Ադրբեջանի իշխանությունների վրա՝ անհապաղ և անվերապահորեն ազատ արձակել հայ ռազմագերիներին և պահվող անձանց,
7. ընդգծել, որ 2020 թվականի պատերազմի արդյունքում ադրբեջանական զինուժի կողմից վերահսկվող Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի բնիկ հայ բնակչության էթնիկ զտումները հանդուրժելի չեն,
8. փաստել, որ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի ավտորիտար ռեժիմի կողմից սանձազերծված պատերազմը, վարձկան ահաբեկիչների տեղակայմամբ, չի կարող հանգեցնել Հայաստանի Հանրապետության տարածքով հատուկ կարգավիճակ ունեցող որևէ տրանսպորտային կապի սահմանմանը՝ ի հաշիվ Հայաստանի անվտանգության և տնտեսական շահերի,
9. Ադրբեջանի իշխանությունների վրա ճնշում գործադրել՝ դադարեցնելու Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության յուրացման և/կամ ոչնչացման քաղաքականությունը,
10. Ադրբեջանի իշխանություններին կոչ անել դադարեցնել հայատյացության և պատերազմական հռետորաբանության քաղաքականությունը։

Text Link

Statement of EAFJD on upcoming meetings and EaP summit

In the run up to the Eastern Partnership Summit and the planned meetings of the President of the European Council Charles MICHEL with the leaders of Armenia and Azerbaijan on 14. December 2021.
EAFJD and its committees, as representatives of the European civil society, call on the President of the European Council to:
1. reiterate EU's support for the mediation efforts of the OSCE Minsk group Co-chairs and the Basic principles, including the right of the native Armenian population of Nagorno-Karabakh/ Artsakh to self-determination;
2. take a clear stance that the ongoing Azerbaijani provocations towards the sovereignty of the Republic of Armenia are unacceptable;
3. urge the Azerbaijani authorities to immediately and completely withdraw their armed forces from the territory of the Republic of Armenia;
4. call on the Azerbaijani authorities to commit to the establishment of a demilitarized security zone around the Armenian settlements, including in Nagorno-Karabakh;
5. point out that any process of delimitation and demarcation between Armenia and Azerbaijan cannot be imposed by the use of force, violation of human rights, at the expense of the national security of Armenia and predetermine the status of Nagorno-Karabakh fulfilling the Azerbaijani claims;
6. put pressure on the Azerbaijani authorities to release the Armenian POW's and captives immediately and unconditionally;
7. emphasize that the ethnic cleansing of the native Armenian population from the settlements of Nagorno Karabakh, controlled by the Azerbaijani armed forces as a result of the war in 2020, cannot be tolerated;
8. make it clear that, a war unleashed by the authoritarian regime of Azerbaijan with the support of Turkey, i.a. by deploying terrorist fighters, cannot lead to imposing any transport connection with a special status through the territory of the Republic of Armenia, at the expense of its security and economic interests;
9. pressure the Azerbaijani authorities to stop the policy of appropriation and/or destruction of the Armenian cultural heritage in Nagorno-Karabakh;
10. urge the Azerbaijani authorities to stop the policy of Armenophobia and war-rhetoric.

Text Link

Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբ

“Together for the Armenian People” event organized by French politicians

On December 6th, on the initiative of the French members of the European Parliament and participation of CDCA ANC France, the “Together for the Armenian People” event took place with more than 500 in attendance. One of the keynote speakers was Republic of Armenia Ombudsman, Arman Tatoyan.
As a result of the initiative, a joint statement was issued.
hSe joint-statement by MEPs François Alfonsi (Officiel) (Greens/ AFE) François-Xavier Bellamy (EPP) Sylvie Guillaume, députée européenne (S&D) Nathalie Loiseau (Renew Europe),
-Urges Azerbaijan to release Armenian captives and prisoners of war without any conditions;
-Calls for the withdrawal of Azeri troops from positions they illegally occupy and for a sustained international effort for the demarcation of borders;
-Stresses that the final status of Nagorno-Karabakh must be decided taking into account territorial integrity and self-determination of the populations concerned.
-States that there is one aggressor and aggressed between Azerbaijan and Armenia and that the international community has given Azerbaijan the impression that it can continue its aggression without consequences.

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

NSW local government elections: Yedelian and Mouradian elected along with many supporters of the Armenian-Australian community

The recent 2021 NSW Local Government Elections results are in, and the majority of candidates featured in the Armenian National Committee of Australia’s (ANC-AU) pre-election report have won seats in Councils across the state, including Armenian-Australians Sarkis Yedelian OAM (City of Ryde) and Sarkis Mouradian (City of Willoughby).
In pre-election meetings with Ryde City Council, Willoughby City Council, Northern Beaches Council, the Hills Shire Council, City of Parramatta Council, North Sydney Council, Fairfield City Council and Cumberland City Council, ANC-AU covered global Armenian issues – including ascertaining candidate positions on the Armenian Genocide, the rights to self-determination of the Republic of Artsakh – as well as local issues. For the local issues, ANC-AU members expressed the interests of community organisations relevant to the districts in which they serve.
ANC-AU Executive Director, Haig Kayserian said: “We congratulate all those who earned the trust of the citizens in their local Wards and wish them the best in representing their constituents this coming term.”

Text Link

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Յիշատակի բացառիկ երեկոներ՝ նուիրուած - Ցեղասպանութեան զոհերու Միջազգային օրուան

Համակազմակերպութեամբ Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբին եւ Յունաստանի Համապոնտական միութեան, Հինգշաբթի՝ 9 Դեկտեմբեր 2021-ին, Աթէնքի «Փարնասոս» շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ ելոյթ մը նուիրուած Ցեղասպանութեան զոհերու միջազգային օրուան։ Յատկապէս ցեղասպանուած ժողովուրդներու ողբերգութիւնները յարգող այդ օրը հաստատուած է Ռաֆայէլ Լեմքինի կողմէ 1948-ին «Ցեղասպանութիւն» եզրի հաստատման եւ ընդունման ծանրակշիռ թուականի հիման վրայ։

Հակառակ որ ելոյթը կազմակերպուած էր հայ եւ պոնտոսցի քաղաքական միաւորներուն կողմէ, այս տարուան նշումը նուիրուած էր աշխարհի վրայ այլ ցեղասպանութիւններու, որոնք կատարուեցան 20-րդ դարուն ընթացքին եւ իրենց ամօթալի հետքը թողած են մարդկութեան վրայ, յատկապէս մարդկային անտարբերութեան եւ անոնց ոճրագործները անպատիժ ձգելուն պատճառով։

Ելոյթին ներկայ եղան Աթէնքի եւ համայն Յունաստանի Իէրոնիմոս արքեպիսկոպոսի ներկայացուցիչը, Յունաստանի խորհրդարանի պատգամաւորներ, համալսարանական դասախօսներ եւ կոկիկ թիւով հասարակութիւն մը, որոնք եկած էին պատուելու Ցեղասպանութեան զոհերու յիշատակը։

Text Link

Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

Կիպրոսի խորհրդարանն ընդունել է Ադրբեջանին դատապարտող բանաձև

Հայ դատի Կիպրոսի հանձնախումբը, նկատի ունենալով Արցախյան պատերազմի տարելիցը, Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կողմից շարունակվող սադրանքները, գործակցաբար Հայ Համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգես Մահտեսյանի, ինչպես նաև Արցախի բարեկամների շրջանակի հետ, պատրաստել է Ադրբեջանին դատապարտող բանաձև, որն Արցախի բարեկամների շրջանակը ներկայացրել է խորհրդարանին։

2021թ. դեկտեմբերի 3-ին Կիպրոսի խորհրդարանը միաձայնությամբ ընդունեց Ադրբեջանին դատապարտող բանաձևը։

Բանաձևի տեքստը ներկայացնում ենք ստորև.

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինի հաղորդագրութիւնը՝ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման վերաբերեալ

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ լիբանանեան լրատուամիջոցներուն յղեց Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման վերաբերեալ «Յանուն Հարաւային Կովկասի շրջանին մէջ իսկական խաղաղութեան ու յարաբերութիւններու իսկական բնականոնացման» խորագիրը կրող հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Օգոստոս 2021-էն սկսեալ, կովկասեան քաղաքական բարձրաստիճան հանդիպումներուն հիմնական առանցքը սկսած է կազմել հայ-թրքական յարաբերութիւններու բնականոնացման հոլովոյթի մը ձեւաւորումը, որ վերջին շաբաթներուն իր վրայ կեդրոնացուց միջազգային եւ շրջանային մամլոյ լուսարձակները, երբ մէկ կողմէ Հայաստանի, Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ղեկավարութիւնները սկսան բառացի կերպով ակնարկել այս իրողութեան, իսկ միւս կողմէ Հայաստան եւ Թուրքիա նշանակեցին այս հոլովոյթին իրենց ներկայացուցիչները:

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info